600.0009.18.06.99

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հունիսի 1999 թվականի №9
քաղ. Երևան

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «բ» ենթակետը և 42-րդ, 43-րդ հոդվածները, ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 1998թ. օգոստոսի 28-ի N 39 որոշմամբ սահմանված կարգը և ելնելով սպառողներին հուսալի ու անվտանգ էներգիայի մատակարարման ապահովման անհրաժեշտությունից, ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը **որոշում է՝**

1. Բավարարել «Որոտանի ՀԷԿՀ» ՊՓԲԸ-ին գործունեության լիցենզիա տրամադրելու վերաբերյալ ընկերության ներկայացրած հայտը և տրամադրել էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա՝ 15 տարի գործողության ժամկետով:
2. Բավարարել «Սևան-Հրազդանյան ՀԷԿԿ» ՊՓԲԸ-ին գործունեության լիցենզիա տրամադրելու վերաբերյալ ընկերության ներկայացրած հայտը և տրամադրել էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա՝ 15 տարի գործողության ժամկետով:
3. Բավարարել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՊՓԲԸ-ին գործունեության լիցենզիա տրամադրելու վերաբերյալ ընկերության ներկայացրած հայտը և տրամադրել էլեկտրական էներգիայի հաղորդման լիցենզիա՝ անժամկետ:

4. Բավարարել «Հարավային էլեկտրացանց» ՊՓԲԸ-ին գործունեության լիցենզիա տրամադրելու վերաբերյալ ընկերության ներկայացրած հայտը և տրամադրել էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա՝ անժամկետ:
5. Բավարարել «Հյուսիսային էլեկտրացանց» ՊՓԲԸ-ին գործունեության լիցենզիա տրամադրելու վերաբերյալ ընկերության ներկայացրած հայտը և տրամադրել էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա՝ անժամկետ:
6. Բավարարել «Կենտրոնական էլեկտրացանց» ՊՓԲԸ-ին գործունեության լիցենզիա տրամադրելու վերաբերյալ ընկերության ներկայացրած հայտը և տրամադրել էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա՝ անժամկետ:
7. Բավարարել «Երևանի էլեկտրացանց» ՊՓԲԸ-ին գործունեության լիցենզիա տրամադրելու վերաբերյալ ընկերության ներկայացրած հայտը և տրամադրել էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա՝ անժամկետ:

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի
փոխնախագահ՝ **Ն. Գրիգորյան**